

Վարագայի Հավատիս հաճութատ տեֆա, հանի բազար իրթեօի, սալը, բէնքեմպիհ, վե ճիւ- մա իրթեօի կիւնէրի լըգմագտա տըր :
Վարագա սէնէտէ 200 նիւսիս վերիկի, գը- լմթի տախի պիւր սէնէ իշին 200, վե ալթը պի- շին 100 զուրուշտուր :

Իրիւզ զուրուշտա պիւր տեֆատա վերեմէյէն քե- սանտան եալընը 50 զուրուշտախի ալընարագ, իւշ- պլըզ 50 նիւսիս զագեթա վերիկէճէր տըր :
Վարագա թանէ իւշ 50 շէր փարայա սաթըլա- ճագ տըր :
Իլանաթըն սաթըրը իւշ տեֆա իշին 3 Վիքինճի

տեֆա իշին 2, վե իւշիւնճիւ վե զիյառե տեֆա- լոր իշին 1 զուրուշտուր :
Մէթուպ վե սայիւրէ, Վարագը խանընտա իւթ գաթտա, 1 նիւմէրուլ օտաւտա, Փանոսեան Վարագետ իսթիսէ կէօնտերիկէճէր տըր :

Պու կիւն սաաթ 10 տա պաշ- քա պիւր Վարագա տահա չըգա- ճագ տըր :

ԱՅԴԱՅԻՆ

ԲԱՆԵԳ ԲԱՐԻՍԿԱՆԵՑ Ի ԳԱՆԻՐԻ
193 Վոյեթուր - Վարագայի պաթըյէ :
Իւ գեռ ժողովուրդին կողմէն շարժում մը չիղած, զապթիկներ բերել տուաւ եկեղե- ցւոյն դուռը սպասցունելու : ասկէց ժողո- վորդեան հետաքրքրութիւնն անթնցաւ, հե- տեւեալ օրը հինգշաբթի՝ 10 յունիս՝ եկե- ղեցիին մէջ սկսանք ժողովիլ որպէս զի մեր սահմանադրական և ազգային իրաւունքը պաշտպանենք : սոյն միջոցին Մկրտիչ եպիսկո- պոսն սկսաւ զապթիկները շատցունել, և ներս մտնողը դուրս հանել չտալ : նոյն միջո- ցին դռնէն մուտքին մը եկաւ, Մկրտիչ Ե- պիսկոպոսին հետ բաղմութեան մէջ մտնելով ուզեց եկեղեցւոյ քիւրիին դուռը կտարել :
մենք ալ դէմ կեցունք չեմոզեցինք : Մուս- վինը Մկրտիչ եպիսկոպոսը սինեակի մը մէջ գոցելով, վաղեց գնաց իմացուց թէ կը մեռ- ցունէին կոր, դժուարաւ ազատեցին : աս միջոցին որոշեցինք որ Վարդիէլ եպիսկոպոսը, պարոնայք Շաւարշ Լուսինեան և Բրա- համ Վ. Մուրատեան երթան զապթիկէն ելե- լութիւնը արդ ընեն : ասոնք՝ երբ ճամբուն վրայ զապթիկէի վէքիին կը պատահին որ հարիւր ջորքով շտապաւ եկեղեցին կը վա- ղէր իբրեւ թէ կռիւ մը պատահեր է, մեկ- տեղ ետ կը գտնան, կուգան և կը հաւ- քուն եկեղեցւոյն բակը : Օապթիկէ վե- քիին երբ հարցուց թէ ի՞նչ է ձեր մերամը, վենք ալ մեր կողմէն Լ. Մուրատեանը ընտ- րեցինք որ խօսի Սահմանադրական իրա-ւանց վրայ, ինչպէս որ խօսեցաւ նա պէտք եղածը : վերջը զապթիկէ վէքիին ըսաւ որ՝ ուրեմն եկէք Վաւըր ըսէք, որ գործերնիդ տեսնուի : երբ դուրս կեցինք, հարիւր ջորք ալ հանելով ամեն մէկերնուս թեւերէն բռնած՝ խայտառակութեամբ իբրեւ մարդաս- պան մեզ շարին շուկային մէջէն ի զարմա- ցումն տեսողաց : Երբ զապթիկէն մտանք Վա- րիէլ եպիսկոպոսն ալ հետ՝ առանց մեղի բառ մը հարցունելու, անունիս գրեցին և ամե- նաստկալի գարշահոտ և մութ տեղ մը մեզ որ 70 խ չափ էինք՝ բանտարկեցին : և Վարդիէլ եպիսկոպոսն ալ ստիպմամբ իր տունը զրկեցին, առանց անոր խնդրանացը մտիկ ընելու : օր հինգշաբթի ժամ հինգին :

Հետեւեալ օրը ձայն մը ելաւ : թէ տեղւոյս հիւպատոսը պիտի գան մեզ տեսնելու, ուստի մեզ ժամ 6 ու կէսին հանեցին վեր ու հոն տեղ մը տուին : Վաղղից հիւպատոսն իր հըպա- տակներն առաւ առաջին իրիկունը և թող տուաւ : Պարսից հիւպատոսն իրեններն առաւ ու իր քովը բանտարկեց՝ իր գաբու օղանին Մկրտիչ եպիսկոպոսին կողմնակից ըլլալուն համար : (ըսուեցաւ ալ որ՝ Պարսից Հիւ- պատոսը տեղեկութիւն չունէր աս բանտար- կութենէն) : Տեղւոյս վսեմ՝ կառավարիչ Խ- մայիլ փաշան Սահմանադրութեան համար, զապթիկէ փաշասին իր առած ծուռ տեղե- կութեանը համեմատ թէեկրաֆ կը զարնէր յՂեքսանդրիա նստող Շէրիֆ փաշային : և ըստ այնմ պատասխանը կընդունէր ու կը գործադրէր : Երբեմն մեզ կընեղին և եր- բեմն թղթաւորութիւն կընէին իսլամի հայա- դէմ զմիւսնացւոյն՝ պաշտպանին Մկրտիչ Եպիսկոպոսի յՂեքսանդրիա՝ որ այս մի- ջոցին Վահրէի հկած էր :
Հաբաթ օրը որ է յունիս 12 փետե- շուր Վուպար փաշային թէեկրաֆ զար- նուեցաւ որ բոլորս ալ թող տրուինք, բայց զապթիկէ փաշասին, որ իսլամի . . . եւ- նին իլթիմաս կընէր Մկրտիչ Եպիսկոպոսն, ուզեց որ յանուն անոր ստորագրութիւն առնէ զրկէ և ապա ազատէ : ըսելով թէ բռնու- թեամբ անոր հնազանդելու էք : Կարգ մը մարդիկ՝ որ իսէր ազգին կամաւ մեր քովն եկած բանտը կը կենային, անոնցմէ առանց ստորագրութիւն առնելու թող տուաւ : կարգ մը մարդիկ ալ իբրեւ ետեւիւր զատեց ուրիշ տեղ գրաւ : կարգ մը ժարդիկ ալ վախեր- նուն ստորագրութիւն տուին ելան : ետքը այն ետեւիւր կարգը բռնեցին իրար խառնեցին, որ ամենը քսան և հինգ հոգի մնացեր էր : Եւ մնացածին թէեւ բան մը չհարցուցին, բայց զապթիկէ փաշասին գիտէր, որ 40 տա- րի ալ հոն չիւրիւմիւշ ըլլալին գիտնային նէ, Մկրտիչ Եպիսկոպոսի անուամբ ստորագ- րութիւն տալու գիտաւորութիւն չունէին :
Եւ մնացող 25 անձինք՝ հետեւեալ օրը որ է կիրակի՝ յունիս 13՝ ժամ ութին իրենց մէջէն պատգամաւոր զրկեցին զապթիկէ փա- շասին սա հետեւեալ 3 անձինքը՝ այն է պա- րոնայք Շաւարշ Լուսինեան, Բրա- համ Վ. Մուրատեան և Պողոս Նիլաճեան, որք հետեւեալ կերպով կը խօսին :

— Տէր, մեզի շնորհք ըրէք, գիտցուցէք դեռ որչափ ատեն հոս մնալնիս : որպէս զի ըստ այնմ անկողին բերել տանք քարերուն վրայ ցուրտ չառնելու համար :
— Կրսէ փաշան : տեսէք ձեզի համար ի՞նչ նեղութիւններ կը կրենք կոր : բոլոր մեր թշնամեաց կողմէն եկած գրութիւնները ցոյց տալով և միկիկ մէկիկ կարգալով զանոնք, և ըսելով թէ դուք կառավարութեան գէմ գործած էք : Մկրտիչ եպիսկոպոսը չէ ձեր տավաճին : Եւս ըսաւ, և Մկրտիչ եպիսկո- պոսին երկու ձիւկլիթական գրութիւնները սկսաւ կարդալ, որոնց իմաստը այս է, «բոլոր բանտարկեալները թող տալերնիդ կը խնդ- րուի, քանզի ես անոնց հետ դատ չու- նիմ» : — Կը տեսնէ՞ք, ըսաւ, որ տավաճի- նիդ ան չէ կառավարութիւնն է :
— Պատգամաւորը ըսին : տէր, եթէ գուր կարող ըլլաք ցուցանել մեր կառա- վարութեան դէմ գործած ըլլալը, մենք 10 տարի լիման կերթանք : իսկ եթէ չէք կրնար, ինչո՞ւ համար մեզ անիրաւ տեղը հոս կը տանջէք : մենք մեր վեհափառ Տէրութեան մեզի շնորհած Սահմանադրու- թեան համեմատ մեր ազգային իրաւունքնե- ռը պաշտպանելու պարտաւոր ենք : դուք ի՞նչ իրաւունք ունիք մեզ մարդասպանաց հետ դասելու՝ ըստ մեր կրօնի յանցաւոր և հրա- ժարականն առնուած վարդապետի մը ան- ուամբ : Կը ճանչնա՞ք վեհ : Տէրութեան մե- զի շնորհած Սահմանադրութիւնը : ըսէք մե- զի : եթէ չէք ճանչնար զայն, մենք ալ մեր կառավարութեան գրինք, որ մեզի հոս պաշտ- պան մը զրկէ : իսկ եթէ կը ճանչնաք զայն, ինչո՞ւ համար մեզ հոս կը նեղէք, երբ մենք ըստ այնմ վարուիլ կը ջանանք :
Մենք ըսին պատգամաւորը, ըսած էինք թէ՝ դուք արդարադատ կառավարիչ մըն էք - արդեօք սխալ է ըսածնիս, թէ աս առաջին ան- գամն է որ անիրաւ դատաստան կըտեսներ :
— Ըսաւ : ի՞նչ ընեմ գառնուկներս, եւ էմիր խուլի եմ, ինձի ինչ հրաման գայ նէ, անանկ կընեմ :
— Պատգամաւորը : քեզի տրուած բոլոր տեղեկութիւնները սուտ են մանաւանդ որ մեր կողմէն բնաւ քննած չէք : դուք միայն մէկ կողմէն ըսելով կը գործէք : վերջը բոլոր ատ օու- տերը երեւան պիտի ելլէ, եւ դուք մեռու- լիյէթի տակ պիտի մնաք :

